

27. Արտոնագրային գործունեություն

2013թ. հանրապետությունում արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների և ֆիրմային անվանումների) իրավական պահպանության հետ կապված գործունեությունն ունեցել է հետևյալ պատկերը.

27.1. Գյուտեր և օգտակար մոդելներ: 2013թ. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 132 գյուտի և 40 օգտակար մոդելի հայտ, որոնցից 165-ը՝ ազգային, 7-ը՝ օտարերկրյա հայտատուներից: Գործակալության գործունեության ընթացքում՝ 1992թ-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ստացված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 3 851: 2013թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը 2012թ. համեմատ նվազել է 10-ով: 2013թ. ազգային հայտատուների կողմից ներկայացվել են գյուտերի 5 միջազգային հայտեր: 1994-2013թթ. ընթացքում մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն է ուղարկվել 76 գյուտի հայտ:

Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից 2013թ. ներկայացվել է 4 հայտ:

2013թ. գործավարությունն ավարտվել է 136 հայտով, ընդ որում, 66 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 28 հայտով՝ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 22 հայտով՝ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին, 18 գյուտի (օգտակար մոդելի) հայտով՝ արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին, 2 հայտով նախապատրաստվել է գյուտի արտոնագրաունակության մասին եզրակացություն:

27.2. Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ: 2013թ. ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 1 796 հայտ (1 168-ը կամ 65.0%-ը ազգային հայտատուներից): 2012թ. համեմատ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը ավելացել է 9.4%-ով:

1 791 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն: Հայտատուների կողմից հետ է կանչվել 5 հայտ, իսկ 70 հայտի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում: Գրանցվել են ապրանքային և սպասարկման 1 567 նշաններ:

2013թ. նշանների միջազգային գրանցման մասին մադրիդյան համաձայնագրի շրջանակում ՀՀ նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 3 025 ծանուցում: Նախնական մերժման մասին որոշում է կայացվել 616, իսկ վերջնական մերժման մասին՝ 435 միջազգային գրանցումներով: Ապրանքային նշանների միջազգային գրանցումներով կայացվել են 2 560 որոշումներ ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ:

2013թ. գործակալություն է ներկայացվել 33 արդյունաբերական նմուշի հայտ, այդ թվում՝ 29 ազգային և 4 օտարերկրյա հայտատուներից:

27.3. Հրապարակումներ: 2013թ. հրատարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի թվով 12 համար: Տեղեկագրերը հրապարակվել են հայերեն և ռուսերեն, որոնց մեջ պաշտոնական տեղեկություններ են հրապարակվել 99 գյուտի, 31 օգտակար մոդելի, 32 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1 574 գրանցված ապրանքա-յին և սպասարկման նշանների, 276 ապրանքային նշանների գրանցման գործողության երկարա-ձգման մասին, ինչպես նաև տեղեկություններ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների, արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի մասին: Ապրանքային նշանի հայտի պաշտոնական հրապարակման և համընդհանուր ծանոթացման նպատակով տպագրվել է «Ապրանքային նշանի հայտեր» պաշտոնական տեղեկագրի թվով 24 համար:

27.4. Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում: 2013թ. ընթացքում քննարկվել և գրանցվել է 112 պայմանագիր, որից 79-ը՝ ապրանքային նշանների իրավունքի փոխանցման, 20-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 2-ը՝ արտոնագրի բացառիկ լիցենզիա տալու մասին, 2-ը՝ արտոնագրի ենթալիցենզիայի, 2-ը՝ ապրանքային նշանի ֆրանչայզինգի, 4-ը՝ ապրանքային նշանի լիցենզիայի փոփոխության, 3-ը՝ ապրանքային նշանի ենթալիցենզիայի: Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ՀՀ իրավաբանական անձանց միջև:

27.5. Ֆինանսական ցուցանիշներ: 2013թ., որպես պետական տուրք, ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 322.2 մլն. դրամ, որի 79.9%-ը (257.6 մլն. դրամ)՝ ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների իրավական պահպանության, 1.0%-ը (3.2 մլն. դրամ)՝ գյուտերի և օգտակար մոդելների իրավական պահպանության, 16.0%-ը (51.4 մլն. դրամ)՝ պետական գրանցամատյանների վարման, 3.0%-ը (9.6 մլն. դրամ)՝ զիջման մասին և լիցենզային պայմանագրերի գրանցման, 0.1%-ը (0.4 մլն. դրամ)՝ բողոքների քննարկման գծով: 2012թ. համեմատ գանձված գումարների չափը ավելացել է 52.2 մլն. դրամով:

Արտոնագրային գործունեության ցուցանիշները, 2008-2013թթ.

		<i>միավոր</i>					
		2008	2009	2010	2011	2012	2013
Ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը		239	168	187	188	182	172
Ներկայացված արդյունաբերական նմուշների հայտերի քանակը		24	35	23	28	57	33
Ներկայացված ապրանքային նշանների հայտերի քանակը		1 443	1 707	1 959	1 717	1 782	1 796
Տրվել է	գյուտի արտոնագիր	127	156	124	112	117	99
	օգտակար մոդելի արտոնագիր	11	30	41	56	37	31
	արդյունաբերական նմուշի արտոնագիր	13	23	22	24	21	32
	ապրանքային նշանի վկայագիր	1 189	1 297	1 499	1 562	1 290	1 574
	որից՝ գրանցված ապրանքային նշանի գատման մասին վկայագիր	-	-	-	2	2	1